Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզին, հարավից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Վայք համայնքին:

Հոդված 44. Օրենքի 13.2-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 13.2
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վայք համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ջերմուկ համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Արենի, «Զ»-«Է» հատվածով՝ Եղեգնաձոր, «Զ»-«Ա» հատվածով՝ Եղեգիս համայնքներին:

Հոդված 45. Օրենքում լրացնել նոր 13.38-րդ հոդված.

«Հոդված 13.38. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 13.38-ում:»:

Հոդված 46. Օրենքում լրացնել նոր 13.38-րդ հավելված.

**«Հավելված 13.38
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Եղեգնաձոր համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Եղեգիս համայնքին, արևելքից և հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վայք համայնքին, հարավից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Արենի համայնքին:

Հոդված 47. Օրենքի 14.35-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 14.35
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մեծաձոր համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Աշտարակ համայնքին, արևելքից, հարավից և արևմուտքից «Բ»-«Ա» հատվածով՝ Թալին համայնքին:

Հոդված 48. Օրենքի 14.64-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 14.64
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ապարան համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզին, հարավից «Գ»-«Ա» հատվածով՝ Աշտարակ համայնքնքին:

Հոդված 49. Օրենքում լրացնել նոր 14.66-րդ հոդված.

«Հոդված 14.66. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 14.66-ում:»:

Հոդված 50. Օրենքում լրացնել նոր 14.66-րդ հավելված.

**«Հավելված 14.66
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»**

Թալին համայնքը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լեռնարոտ, «Գ»-«Դ» հատվածով՝ Շամիրամ, «Դ»-«Ե» հատվածով՝ Արուճ, «Ե»-«Զ» հատվածով՝ Ամանոս համայնքներին, հարավ-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին, «Է»-«Ը» հատվածով՝ Արագածավան համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Արևուտ, «Թ»-«Ժ» հատվածով՝ Արագածավան, «Ժ»-«Ա» հատվածով՝ Արևուտ համայնքներին:

Հոդված 51. Օրենքում լրացնել նոր 14.67-րդ հոդված.

«Հոդված 14.67. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 14.67-ում:»:

Հոդված 52. Օրենքում լրացնել նոր 14.67-րդ հավելված.

**«Հավելված 14.67
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»**

Արևուտ համայնքը համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում և կազմված է երկու հատվածից:

Համայնքի արևմտյան հատվածը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Թալին համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Արագածավան համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, «Դ»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին:

Համայնքի արևելյան հատվածը արևմուտքից, հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Թալին համայնքին, հարավից «Բ»-«Ա» հատվածով՝ Արագածավան համայնքին:

Հոդված 53. Օրենքում լրացնել նոր 14.68-րդ հոդված.

«Հոդված 14.68. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 14.68-ում:»:

Հոդված 54. Օրենքում լրացնել նոր 14.68-րդ հավելված.

«Հավելված 14.68
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աշտարակ համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին, «Բ»-«Գ» հատվածով՝ Ապարան համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Եղվարդ, «Դ»-«Ե» հատվածով՝ Պռոշյան համայնքներին, «Ե»-«Զ» հատվածով՝ Երևան քաղաքին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին, արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Թալին, «Ը»-«Թ» հատվածով՝ Մեծաձոր, «Թ»-«Ա» հատվածով՝ Թալին համայնքներին:

Հոդված 55. Օրենքի 15.1-ին հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված 15.1
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գավառ համայնքը գտնվում է մարզի հյուսիս-արևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևմուտքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևան համայնքին, հյուսիս-արևելքից և արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սևանա լճին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Մարտունի համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզին:

Հոդված 56. Օրենքի 15.2-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված 15.2
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մարտունի համայնքը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևմուտքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գավառ համայնքին, հյուսիսից «Բ»-«Գ» հատվածով՝ Սևանա լճին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Վարդենիս համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզին, «Զ»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզին:

Հոդված 57. Օրենքի 15.83-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված 15.83
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սևան համայնքը գտնվում է մարզի հյուսիս-արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ճամբարակ համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սևանա լճին, հարավարևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Գավառ համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզին:

Հոդված 58. Օրենքի 15.84-ին հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 15.84
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՂԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վարդենիս համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևմուտքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շողակաթ համայնքին, հյուսիս-արևելքից, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Մարտունի համայնքին, «Ե»-«Ա» հատվածով՝ Սևանա լճին:

Հոդված 59. Օրենքի 16.3-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 16.3
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թումանյան համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ալավերդի համայնքին, արևելքից և հարավ արևելքից «Բ»-«Գ» հատվածով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ փամբակ, «Դ»-«Ա» հատվածով Օձուն համայնքներին:

Հոդված 60. Օրենքի 16.73-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 16.73
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Փամբակ համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գյուլագարակ համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Օձուն համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Թումանյան համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին, հարավից «Ե»-«Զ» հատվածով Ֆիոլետովո

համայնքին, «Զ»-«Է» հատվածով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզին, հարավ-արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Լեյնոնտովո համայնքին, արևմուտքից, հարավից և դարձյալ արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Վանաձոր համայնքին, հարավ-արևմուտքից «Թ»-«Ժ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզին, արևմուտքից «Ժ»-«Ա» հատվածով՝ Սպիտակ համայնքին:

Հոդված 61. Օրենքում լրացնել նոր 16.80-րդ հոդված.

«Հոդված 16.80. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 16.80-ում:»:

Հոդված 62. Օրենքում լրացնել նոր 16.80-րդ հավելված.

**«Հավելված 16.80
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սպիտակ համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ստեփանավան, «Բ»-«Գ» հատվածով Գյուլագարակ համայնքներին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ փամբակ համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին:

Հոդված 63. Օրենքում լրացնել նոր 16.81-րդ հոդված.

«Հոդված 16.81. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 16.80-ում:»:

Հոդված 64. Օրենքում լրացնել նոր 16.81-րդ հավելված.

**«Հավելված 16.81
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձոր համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը արևմուտքից, հյուսիսից և հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Փամբակ համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լեյնոնտովո համայնքին, Հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզին:

Հոդված 65. Օրենքի 18.52-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հավելված 18.52
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅՏԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերյան համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիս-արևմուտքից, հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության պետական սահմանին հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Իջևան համայնքին, հարավ-արևմուտքից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզին:

Հոդված 66. Օրենքի 18.1-ին հավելվածում «(Իջևանի շրջան)» բառերը փոխարինել «Ծաղկավան» բառով:

Հոդված 67. Օրենքի 8.6-րդ, 8.7-րդ, 8.13-րդ, 8.14-րդ, 8.15-րդ, 8.16-րդ, 8.17-րդ, 8.18-րդ, 8.21-րդ, 8.22-րդ, 8.23-րդ, 8.25-րդ, 8.26-րդ, 8.29-րդ, 8.30-րդ, 8.31-րդ, 8.32-րդ, 8.33-րդ, 8.34-րդ, 8.37-րդ, 8.38-րդ, 8.39-րդ, 8.40-րդ, 8.41-րդ, 8.42-րդ, 9.9-րդ, 9.13-րդ, 9.20-րդ, 9.25-րդ, 9.27-րդ, 9.32-րդ, 9.33-րդ, 9.37-րդ, 9.40-րդ, 9.46-րդ, 9.47, 9.49-րդ, 11.1-ին, 11.2-րդ, 11.4-րդ, 11.5-րդ, 11.6-րդ, 11.7-րդ, 11.8-րդ, 11.9-րդ, 11.10-րդ, 11.11-րդ, 11.12-րդ, 11.13-րդ, 11.14-րդ, 11.15-րդ, 11.16-րդ, 11.17-րդ, 11.18-րդ, 11.20-րդ, 11.21-րդ, 11.22-րդ, 11.23-րդ, 11.24-րդ, 11.25-րդ, 11.26-րդ, 11.27-րդ, 11.28-րդ, 11.29-րդ, 11.31-րդ, 11.32-րդ, 11.33-րդ, 11.35-րդ, 11.36-րդ, 12.3-րդ, 12.4-րդ, 12.5-րդ, 12.6-րդ, 12.8-րդ, 12.9-րդ, 12.10-րդ, 12.11-րդ, 12.12-րդ, 12.13-րդ, 12.14-րդ, 12.15-րդ, 12.16-րդ, 12.17-րդ, 12.18-րդ, 12.19-րդ, 12.20-րդ, 13.12-րդ, 13.18-րդ, 13.26-րդ, 14.1-ին, 14.4-րդ, 14.5-րդ, 14.6-րդ, 14.8-րդ, 14.10-րդ, 14.11-րդ, 14.12-րդ, 14.14-րդ, 14.15-րդ, 14.16-րդ, 14.19-րդ, 14.20-րդ, 14.22-րդ, 14.23-րդ, 14.27-րդ, 14.28-րդ, 14.30-րդ, 14.31-րդ, 14.34-րդ, 14.36-րդ, 14.37-րդ, 14.38-րդ, 14.39-րդ, 14.40-րդ, 14.43-րդ, 14.44-րդ, 14.46-րդ, 14.49-րդ, 14.50-րդ, 14.54-րդ, 14.55-րդ, 14.56-րդ, 14.57-րդ, 14.58-րդ, 14.59-րդ, 14.62-րդ, 14.63-րդ, 15.5-րդ, 15.6-րդ, 15.11-րդ, 15.14-րդ, 15.17-րդ, 15.18-րդ, 15.19-րդ, 15.21-րդ, 15.22-րդ, 15.23-րդ, 15.26-րդ, 15.29-րդ, 15.30-րդ, 15.31-րդ, 15.33-րդ, 15.34-րդ, 15.35-րդ, 15.36-րդ, 15.37-րդ, 15.38-րդ, 15.39-րդ, 15.40-րդ, 15.41-րդ, 15.42-րդ, 15.44-րդ, 15.45-րդ, 15.46-րդ, 15.47-րդ, 15.48-րդ, 15.51-րդ, 15.52-րդ, 15.55-րդ, 15.56-րդ, 15.58-րդ, 15.60-րդ, 15.61-րդ, 15.63-րդ, 15.64-րդ, 15.71-րդ, 15.65-րդ, 15.66-րդ, 15.69-րդ, 15.74-րդ, 15.75-րդ, 15.76-րդ, 15.77-րդ, 15.78-րդ, 15.80-րդ, 16.8-րդ, 16.12-րդ, 16.15-րդ, 16.16-րդ, 16.18-րդ, 16.22-րդ, 16.23-րդ, 16.25-րդ, 16.26-րդ, 16.27-րդ, 16.28-րդ, 16.31-րդ, 16.35-րդ, 16.42-րդ, 16.46-րդ, 16.48-րդ, 16.53-րդ, 16.56-րդ, 16.57-րդ, 16.59-րդ, 16.66-րդ, 16.67-րդ, 16.69-րդ, 16.70-րդ, 16.74-րդ, 18.32-րդ, 18.51-րդ հոդվածները և հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 68. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Այնուհետ, համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվեց նաև այլ փաստաթղթերում, մասնավորապես, ՀՀ կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն:

2016 թվականի փետրվարի 14-ից ի վեր իրականացվել է համայնքների միավորման թվով 54 ծրագիր, ինչի արդյունքում 486 համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է թվով 54 համայնք:

Միավորված համայնքներում իրականացվել են վերլուծություններ՝ համայնքային փնջերի ծրագրային առաջնահերթությունների վերաբերյալ, ինչի արդյունքում հրապարակվել է այդ վերլուծությունների ամփոփ հաշվետվությունը (այն զետեղված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում):

Վարչատարածքային բարեփոխումների ծրագրի շրջանակներում միավորված համայնքներում իրականացվել են ներդրումային ծրագրեր՝ ԱՄՆ ՄՋԳ (8.6 մլն ԱՄՆ դոլար) և Շվեյցարական դաշնային զարգացման գործակալության (2,3 մլն ԱՄՆ դոլար) ֆինանսավորմամբ:

ԱՄՆ ՄՋԳ կողմից ֆինանսավորվող ծրագիրը մեկնարկել է 2015թ. օգոստոսին, նախատեսված է ավարտել 2022թ. հունիսի 30-ին: Ծրագրի ընդհանուր արժեքը 9.39 մլն դոլար է, որից 8.6 միլիոնը դրամաշնորհն է, իսկ 786 հազար դոլարը ներդրվելու է համայնքների կողմից:

ՇՋՀԳ կողմից ֆինանսավորվող ծրագիրն ուժի մեջ է մտել 2017թ. սկզբին, ավարտվել է 2018թ. դեկտեմբերի 31-ին:

Ծրագրում ընդգրկվել են Սյունիքի և Վայոց Ձորի 5 խոշորացված համայնքներ, որոնցում ենթածրագրերն իրականացվում են ՄՆՏԶ-ի 2-րդ բաղադրիչի ընթացակարգերով: Բացի ծրագրում ընդգրկված համայնքների՝ զարգացման ծրագրեր ձևավորելու և իրականացնելու կարողությունները հզորացնելուց, աշխատանք է կատարվել ներդրումների կենսունակության ապահովման ուղղությամբ՝ բազմաֆունկցիոնալ կոմունալ ձեռնարկություն ստեղծելու և դրա գործունեության իրավական, սոցիալական, կազմակերպական ասպեկտները ճիշտ պլանավորելու միջոցով: Արդյունքում մշակվել է արդյունավետ կառավարման համակարգ, որը կիրառելի է ցանկացած համայնքի համար:

ՇՋՀԳ Ծրագրի համայնքների համար մատակարարվել է 59 միավոր կազմող կոմունալ նշանակության, ինքնագնաց և կցովի գյուղատնտեսական տեխնիկա և 743 աղբարկղ՝ համայնքներում պատշաճ աղբահանություն կազմակերպելու համար:

ՇՋՀԳ-ի Ծրագրով ընդհանուր ծախսը կազմում է 2.48 մլն ԱՄՆ դոլար (այս գումարը ներառնում է նաև համայնքային ներդրումները):

Ընթացքի մեջ է սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի 2-րդ բաղադրիչը, որի շրջանակներում համայնքներին մատակարարվել է շուրջ 5.33 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 169 միավոր ինքնագնաց և կցովի գյուղատնտեսական տեխնիկա և 1162 աղբի կոնտեյներներ՝ համայնքներում պատշաճ աղբահանություն կազմակերպելու համար: Բացի այդ կառուցվել է 3 կայանատեղ, 6 հասարակական տրանսպորտի կանգառ՝ գյուղական բնակավայրերում, 5 արևային կայաններ, 4 ինժեներական լաբորատորիա՝ հիմնադրված 1 քաղաքային և 3 գյուղական դպրոցներում (դրանցում ուսուցում է անցել 375 աշակերտ):

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության ծրագրում (ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա), ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի №650-Լ որոշմամբ հաստատված գերակա խնդիրների և միջոցառումների ցանկում ընդգրկվել է «Վարչատարածքային բաժանման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ՀՀ կառավարություն ներկայացնելը» միջոցառումը:

Նախագծով նախատեսվում է ձևավորվել հետևյալ համայնքային փնջերը.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ՝ Աշտարակ, Ագարակ, Աղծք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եղեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով (թվով 30),

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան՝ Ապարան, Մելիքգյուղ (թվով 2),

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին՝ Թալին, Ագարակավան, Ակունք, Աշնակ, Գառնահովիտ, Դաշտադեմ, Դավթաշեն, Դիան, Եղնիկ, Զարինջա, Զովասար, Թաթուլ, Իրինդ, Ծաղկասար, Կաթնաղբյուր, Կարմրաշեն, Կաքավաձոր, Հացաշեն, Մաստարա, Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Նոր Արթիկ, Շղարշիկ, Ոսկեթաս, Պարտիզակ, Սուսեր, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ցամաքասար (թվով 29),

ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձոր՝ Մեծաձոր, Օթևան (թվով 2),

ՀՀ Արագածոտնի մարզի Արևուտ՝ Արևուտ, Դոմասար, Թլիկ, Կանչ, Հակո, Սորիկ (թվով 6),

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ՝ ք. Արտաշատ, Աբովյան, Ագատավան, Այգեզարդ, Այգեպատ, Այգեստան, Արաքսավան, Արևշատ, Բաղրամյան, Բարձրաշեն, Բերդիկ, Բերքանուշ, Բյուրավան, Բուրաստան, Գետազատ, Դալար, Դեղձուտ, Դիմիտրով, Դիտակ, Դվին, Լանջազատ, Կանաչուտ, Հնաբերդ, Հովտաշեն, Մասիս, Մխչյան, Մրգանուշ, Մրգավան, Մրգավետ, Նարեկ, Նշավան, Նորաշեն, Շահումյան, Ոստան, Զրաշեն, Վարդաշեն, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն (թվով 38),

ՀՀ Արարատի մարզի Արարատ՝ ք. Արարատ, գ. Արարատ, Ավշար, Արմաշ, Երասխ, Զանգակատուն, Լանջառ, Նոյակերտ, Պարույր Սևակ, Սուրենավան, Վարդաշատ, Ուրցալանջ (թվով 12),

ՀՀ Արարատի մարզի Մասիս՝ ք. Մասիս, Այնթապ, Ագատաշեն, Արբաթ, Արգավանդ, Արևաբույր, Գեղանիստ, Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Խաչփար, Հայանիստ, Հովտաշատ, Դուկասավան, Մարմարաշեն, Նիզամի, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին, Նորաբաց, Նորամարգ, Զրահովիտ, Ռանչպար, Սայաթ-Նովա, Սիս, Սիփանիկ, (թվով 27),

ՀՀ Արարատի մարզի Վեդի՝ ք. Վեդի, Այգավան, Արալեզ, Գինեվետ, Գոռավան, Դաշտաքար, Եղեգնավան, Լուսաշող, Լուսառատ, Նոր Կյանք, Նոր Ուղի, Ոսկետափ, Ուրցածոր, Սիսավան, Վանաշեն, Տափերական, Փոքր Վեդի (թվով 17),

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր՝ ք. Արմավիր, Այգեվան, Արաքս, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Մյասնիկյան, Նորավան, Սարդարապատ (թվով 11),

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ՝ ք. Էջմիածին, Ոսկեհատ (թվով 2),

«Արմավիրի մարզի Մեծամոր» Մեծամոր, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արագածի, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան (թվով 31),

«Արմավիրի մարզի Բաղրամյան» Բաղրամյան, Արգինա, Արևադաշտ, Արտամետ, Բագարան, Դալարիկ, Երվանդաշատ, Լեռնագոգ, Կողբավան, Հուշակերտ, Շենիկ, Վանանդ, Տավորիկ, Քարակերտ (թվով 14),

«Արմավիրի մարզի Արաքս» Զրառատ, Ակնաշեն, Ապագա, Առատաշեն, Արաքս (Էջմիածնի շրջ.), Արտիմետ, Գայ, Գրիբոյեդով, Լուսագյուղ, Խորոնք, Հայկաշեն, Մեծամոր, Զորարի (թվով 13),

«Արմավիրի մարզի Խոյ» Գեղակերտ, Աղավնատուն, Ամբերդ, Այգեշատ, Արագած, Արշալույս, Դաշտ, Դողս, Լեռնամերձ, Ծաղկալանջ, Ծաղկունք, Ծիածան, Հայթաղ, Հովտամեջ, Մոնթեավան, Մրգաստան, Շահումյան (թվով 17),

«Արմավիրի մարզի Փարաքար» Փարաքար, Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան (Էջմիածնի շրջ.), Մերձավան, Մուսալեռ, Նորակերտ, Պտղունք (թվով 8),

«Գեղարքունիքի մարզի Գավառ» Գավառ, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովագարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան (թվով 12),

«Գեղարքունիքի մարզի Մարտունի» ք. Մարտունի, Աստղածոր, Արծվանիստ, Գեղհովիտ, Երանոս, Զուլաքար, Լիճք, Ծակքար, Ծովասար, Ծովինար, Զորագյուղ, Մադինա, Ներքին Գետաշեն, Վաղաշեն, Վարդածոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն (թվով 17),

«Գեղարքունիքի մարզի Սևան» Սևան, Գեղամավան, Դրմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Ծովագյուղ, Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա, Վարսեր (թվով 11),

«Գեղարքունիքի մարզի Վարդենիս» Վարդենիս, Ախարածոր, Ակունք, Գեղամասար, Գեղաքար, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Վանևան, Տորֆավան (թվով 15),

«Լոռու մարզի Վանաձոր» Վանաձոր, Գուգարք, Դարպաս, Շահումյան (թվով 4),

«Լոռու մարզի Թումանյան» Թումանյան, Դսեղ, Չկալով (թվով 3),

«Լոռու մարզի Սպիտակ» Սպիտակ, Արևաշող, Արջհովիտ, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրակամուտ, Զրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարածոր (թվով 21),

«Լոռու մարզի Փամբակ» Փամբակ, Ազնվածոր, Անտառամուտ, Արջուտ, Բագում, Դեբետ, Եղեգնուտ, Լեռնապատ, Մարգահովիտ, Հալավար, Զորագետ, Զորագյուղ, Վահագնածոր, Վահագնի, Քարաբերդ (թվով 15),

«Կոտայքի մարզի Հրազդան» Հրազդան, Լեռնանիստ, Զրառատ, Սուլակ, Քաղսի (թվով 5),

«Կոտայքի մարզի Աբովյան» Աբովյան, Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի, Վերին Պտղնի (թվով 11),

«Կոտայքի մարզի Նաիրի» Եղվարդ, Արգել, Գետամեջ, Թեղենիք, Մրգաշեն, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Նոր Հաճն, Պռոշյան, Քանաքեռավան, Քասախ, Քարաշամբ (թվով 12),

«Կոտայքի մարզի Ծաղկածոր» Ծաղկածոր, Մեղրածոր, (թվով 2),

«Կոտայքի մարզի Գառնի» Գառնի, Գեղադիր, Գեղարդ, Գողթ, Հացավան, Ողջաբերդ (թվով 6),

«Շիրակի մարզի Արթիկ» Արթիկ, Անուշավան, Արևշատ, Գեղանիստ, Գետափ, Լեռնակերտ, Լուսակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հառիճ, Հոռոմ, Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան,

Նոր Կյանք, Պենզաշեն, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան, Վարդաքար, Տուֆաշեն, Փանիկ, Փոքր Մանթաշ (թվով 24),

«ՀՀ Երևանի մարզի Ախուրյան» Ախուրյան, Ագատան, Ախուրիկ, Առափի, Բայանդուր, Բենիամին, Գետք, Երազգավորս, Հայկավան, Դարիբջանյան, Մարմաշեն, Ոսկեհասկ, (թվով 12),

«ՀՀ Երևանի մարզի Ամասիա» Ամասիա, Արփի (թվով 2),

«ՀՀ Երևանի մարզի Աշոցք» Աշոցք, Սարապատ (թվով 2),

«ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր» Եղեգնաձոր, Գլաձոր, Մալիշկա (թվով 3),

«ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք» Վայք, Զառիթափ (թվով 2), բացի այդ՝ միավորվող համայնքին են միացվում Զերմուկ համայնքի Կարմրաշեն և Հերիեր բնակավայրերը,

«ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկ» համայնքից անջատվում են Կարմրաշեն և Հերիեր բնակավայրերը,

«ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան» Նոյեմբերյան, Այրում, Կողբ (թվով 3):

Այսպիսով, առաջարկվող ծրագրերում ներգրավված է լինելու թվով 441 համայնք, որոնց միավորման (համայնքից բնակավայրի անջատման) արդյունքում ձևավորվելու է թվով 37 համայնք:

Միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ (նաև բնակիչների հետ «Town Hall» ձևաչափով) կազմակերպվել են քննարկումներ, որոնց արդյունքներով մշակվել է «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Գերիշխող համայնքներում քննարկումների ընթացքում բնակչության մեծամասնությունը հակված է եղել համայնքների միավորման «շրջանային» մոդելին: Արագածոտնի մարզում միավորվող Արևուտ և Մեծածոր համայնքները ձևավորվում են համապատասխանաբար թվով 5 և 2 համայնքների միավորումից: Այդ համայնքներում հիմնական բնակչությունը բաղկացած է ազգային փառամասնություն համարվող եզդի բնակչությունից: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների համաձայն՝ այդ համայնքները միավորվում են միմյանց հետ, որպեսզի չնվազի այդ համայնքների բնակչության կառուցվածքային կազմը: Այդ նույն պարտավորությունների շրջանակում միավորման ծրագրերում չեն ներառվում Արագածոտնի մարզի Շամիրամ, Արմավիրի մարզի Ֆերիկ, Արարատի մարզի Վերին Դվին, Կոտայքի մարզի Արզնի և Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքները:

Նախագծում ներառվել է նաև Կադաստրի կոմիտեի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի հիմքում ընկած է ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի՝ 2020 թվականի օգոստոսի 21-ին կայացած №2020-02 նիստի ընթացքում ընդունված առաջարկությունները, որոնք ձևավորվել էին ՀՀ Արագածոտնի, Արարատի, Լոռու և Սյունիքի մարզպետների որոշումների հիման վրա:

Նախագծով նախատեսվում է Սյունիքի մարզի Կապան համայնքի բնակավայրերի ցանկը լրացնել Ըրկենանց բնակավայրով: Այդ առաջարկությունը ստացվել է Կապան համայնքի ղեկավարից, որը փոխանցվել է Կադաստրի կոմիտե և քննարկվել է ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի՝ 2020 թվականի օգոստոսի 21-ին կայացած №2020-02 նիստի ընթացքում և ստացել դրական եզրակացություն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի համաձայն՝ նախատեսվում է իրականացնել համայնքների միավորման (վերակազմակերպման) 37 ծրագիր՝ Արագածոտնի մարզի Աշտարակ, Ապարան, Թալին, Մեծածոր, Արևուտ, Արարատի մարզի Արարատ, Արտաշատ, Մասիս, Վեդի, Արմավիրի մարզի Արաքս, Արմավիր, Բաղրամյան, Խոյ, Մեծամոր, Վաղարշապատ, Փարաքար, Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Լոռու մարզի Թումանյան, Սպիտակ, Վանաձոր, Փամբակ, Կոտայքի մարզի Աբովյան, Գառնի, Ծաղկաձոր, Հրազդան, Նաիրի, Շիրակի մարզի Ախուրյան, Ամասիա, Աշոցք, Արթիկ, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Զերմուկ, Վայք, Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքային փոփոխությունները:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու նպատակն է՝ վերոնշյալ համայնքներում նշանակել համայնքի ավագանու ընտրություն, միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները դադարեցնելու և միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման ժամկետների վերաբերյալ օրենքով տալ իրավակարգավորումներ, ինչպես նաև կարգավորել նոր համայնքի ձևավորմամբ պայմանավորված համայնքային սեփականություն համարվող գույքի փոխանցման հարցերը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

4. Անկախ վրդ արդյունքը

Իրավական ակտերի փաթեթի կիրառման դեպքում կապահովվի համայնքների միավորման գործընթացի իրավական բազան:

Նախագիծը բխում է ծրագրի Կառավարության 18.08.2021թ. №1363-Ա որոշմամբ հաստատված և Ազգային ժողովի 14.02.2019թ. N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության ծրագրի (2021-2026թթ.) 6.6-րդ կետից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷՆԿԱՆ ՆԿԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքների ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջ չի առաջանում, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում: